



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ՝

ՈՒՂՂՈՒԱԾ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԹԵՄԵՐՈՒՆ

**ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐԲԱԶԱՆԻՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ,
ՍԱՐԿԱԽԱԳԱՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ՈՐՔ Ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ, ՅԱՐԵԻԵԼԵԱՆ ԵՒ ՅԱՐԵՒՄՏԵԱՆ
ԹԵՄՍ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԵՒ Ի ԳԱՆԱՏԱ**

Մեր Հովուապետական այցելութենէն վերադարձին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սրբապնաճաճանչ խորանին առջև գոհաբանական աղօթք մատուցինք առ Բարձրեալն և Ամենախնամ Աստուած, և ձեր բոլորի սէրն ու նուիրումը, հաւատքն ու յարգանքը հոգեփունջի վերածած՝ ընծայեցինք Իրեն, ըսելով.

«Փառք և գոհութիւն Քեզ, Հայր Երկնաւոր, որ շնորհ ըրիք ինձի և իմ հոգևոր վերին խնամատարութեան յանձնուած Ամերիկաբնակ և Գանատաբնակ ժողովուրդին այս անդրանիկ այցելութեամբ վերանորոգելու մեր մէջ Քրիստոսաւանդ մշտակենդան հաւատքը՝ մեր Հայց. Առաքելական Սուրբ և Մէկ Եկեղեցւոյ մատոռուակումով մեզի ընծայուած և մեր սուրբ

հայրերու ամանդութեամբ կնքուած: Մեր բոլորի հոգիներուն մէջ խորանացեալ Ս. Էջմիածինը պայծառ շողարձակումով առաւել ևս լոյս զգեցաւ մեր բոլորի ապրումներուն մէջ:

Ո՛վ Տէր, միշտ զգայուն և ընկալուչ պահէ մեր հոգիները, որպէսզի յարաճուն ընթացքով, յուսաւոր և ջերմ ներգործութեամբ իմաստաւորուին և արժնորուին մեր կեանքերը մեր իսկ երջանկութեան, մեր Եկեղեցւոյ բարեկարգ պահպանութեան, մեր ազգի վերածաղկման, Միացեալ Նահանգներու և Գանատայի բարգաւաճման և մեր Մայր Հայրենիքի և անոր ապատ ու անկախ Հանրապետութեան ամրացման և Քուսնուան փառաբանման համար»:

Սիրելի՛ք,

Լրիւ վեց շաբաթներ (Յունուար 10-էն Փետրուար 20) ձեզի հետ եղանք, ձեզի հետ միասին աղօթեցինք, ձեզի խօսեցանք, լայնօրէն բանալով մեր սիրտն ու միտքը, ձեզ լսեցինք, մանաւանդ ձեր երիտասարդ սերունդին մէջէն, մէկ խօսքով՝ հաղորդուեցանք իրարու, միասնաբար բաժնելով Աստուծոյ և մեր Սուրբ Եկեղեցւոյ, մեր ազգի ու հայրենիքի ապրումները, հացին, աղին և ջուրին պէս:

Մեր Հովուապետական ամբողջ շրջագայութեան ընթացքին, ի Նիւ Եորք, ի Ուաշինկթըն, ի ՓրաՎիդէնս, յՈւստոր, ի Պոստոն, ի Տիտրոյիթ, ի Շիքսկօ, ի Թորոնթօ, ի Մոնթրէալ, յՕթթաուա, ի Վանքուվըր, ի քաղաքաշատ Լոս Անձելոս, ի Սաքրամենթօ, ի Լաս Վեկաս, ի Ֆրէշնօ, ի Ֆաուլըր, ի Բիտլի, յԵդէմ, ի Սարաթօկա, ի Սան Ֆրանսիսկօ, յՕրլինս, ի Ֆլորիտա, տեսանք ձեզ, վկայ եղանք ձեր հաւատքի վերակենդանութեան և զօրացանք ու հրճուեցանք ձեր սիրովը և արժանավայել վերաբերումովը հանդէպ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Սուաշին հերթին սրտի պարտք կը զգանք Մեր շնորհակալութիւնները յայտնելու ձեր բոլորին անխտիր, Սուջնորդ Սրբապաններուն, Թեմական, Երեսփոխանական և Վարչական ժողովոց անդամներուն, հովուապետական այցելութեան կազմակերպման Կեդրոնական Վարչութեան, տեղական Յանձնախումբերուն և հովանաւոր անձերուն, բոլոր կապակերպութիւններու, միութիւններու և հաստատութիւններու, մամուլի պատասխանատուներուն, որոնց առիթն ունեցանք անձամբ հանդիպելու և ճանչնալու: Գիտենք, որքա՞ն ժամանակ և ջանք ի գործ դրիք որպէսզի արդիւնալից պտղաբերմամբ պսակուի Մեր անդրանիկ այցելութիւնը:

Այստեղ, Ս. Էջմիածնի վեհալայրին մէջ անցնող մի քանի օրերու ընթացքին Մենք առիթը ունեցանք խորհրդածելու Մեր

հովուապետական այցելութեան հետ առնչուած անցուդարձերուն մասին: Մեր այս Հովուապետական Թուղթին մէջ կ'ուզենք ձեզի փոխանցել այն մտածումները, որոնք Մեր այցելութեան իմաստն ու արժէքը լուսարձակի տակ կը դնեն և որոնց շատերուն մասին այլապէս առիթներով ձեզի խօսելու և ձեզի հետ խօսակցելու առիթներ ունեցանք արդէն Միացեալ Նահանգներու և Գանատայի մէջ:

1. ԿՐՕՆԱԿԱՆ-ՀՈԳԵԻՈՐ ՎԵՐԱԶԱՐԹՕՆՔ

Հոգևոր վերարթնութեան իրողութիւնը ներկայ աշխարհի ամենէն յատկանշական և պերճախօս երևոյթներէն մէկն է, համաշխարհային մակարդակի վրայ դիտուած: Մեր ազգը չի կրնար անմասն մնալ այդ շարժումին: Բրիստոնէական պատմութեան երկրորդ հապարամեակի վերջալոյսին, երբ բոլոր Եկեղեցիները և քրիստոնէայ ազգերը պիտի տօնեն երկու հապար տարիներու քրիստոնէական կեանքի այնքան նշանակալից այս հանգրուանը, մենք, հայերս, պիտի նշենք Բրիստոնէութեան որպէս պետական ու ազգային կրօն ճանաչման 1700-ամեակը:

Անցեալին ընծայուած արժանի յարգանքին կողքին - և անկէ աւելի կարևոր - այդ տօնակատարութիւնը պէտք է դառնայ վերանորոգումի, մեր Հայց. Սոաքելական Եկեղեցւոյ վերանորոգեալ կեանքի նոր հոսանք մը, նոր ջրտուք մը Տիրոջ Հայկեան այգիին և անոր մէջ ծաղկած Ս. Մեսրոպի «փոքր ածու»ին մէջ:

Այստեղ, Մայր Հայաստանի մէջ, մասնաւորաբար այս վերջին տարիներուն, և յատկապէս ապատ ու անկախ Հանրապետութեան հռչակումէն առիին, կրօնական վերապարթօնքի իսկական շունչ մը կեանք առած է մեր հայրենի ժողովուրդի կեանքին մէջ: Անմիջական և ստիպողական կարիքն ունի ան սնուցուելու, խնամուելու քրիստոնէական հաւատքի առողջարար և երջանկաբեր սկզբունքներով, Բրիստոսի Սուրբ Աւետարանի հոգևոր ու բարոյական ուսուցումներով և մեր Սրբապան Հայրերու հարապատ աւանդներուն վերակենդանացումով:

- Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը, ժառանգորդը հռչակաւոր Գէորգեան Ճեմարանին, Սևանի և Գիւմրիի հոգևոր դպրանոցները լծուած են մարդու, հոգևորական մարդու, նոր ոգիով թրծուած հոգևոր սպասաւորներու պատրաստութեան նուիրական և կենսական գործին:

- Բրիստոնէական կրթութեան գործը թէ՛ պետական վարժարաններու և թէ՛ կիրակնօրեայ դպրոցներու մէջ նոր

թափ է ստացած:

- Ժողովրդական խաւերու մէջ քրիստոնէական քարոզութեան մարզը աւելի շեշտեալ տարողութիւն է պզեցած:

- Կրօնական ժողովրդական հրատարակութիւններու, խողա-տեսողական (audio-visual) միջոցներու պատրաստութիւնն ու տարածումը յատուկ և շեշտեալ ուշադրութեան առակայ են դարձած:

- Հին և մասամբ վնասուած կամ աւերուած եկեղեցիներու նորոգութիւնն ու նոր եկեղեցիներու կառուցումը հարկ է որ ստանան նոր մղում:

Այս և նման ու յարակից այլ կարիքներ մեզ բոլորս կը դնեն նո՛ր պարտաւորութիւններու առջև: Հարկ է որ դուք և արտասահմանի մեր բոլոր զաւակները ոյժ տան, պօրափիզ կանգնին տեղական ջանքերուն, որպէսզի քրիստոնէական վերածնութեան շարժումը դառնայ առաւել ևս պտղաբեր: Արագ և կանուխ շարժիլը աւելի մեծ արդիւնքներ պիտի տայ այսօր քան վաղը: Թույլացում կամ տկարացում այս մարզին մէջ՝ պիտի ըլլայ պատմական սխալ մը: Ժամն է գործի, զոհողութեան և յանձնառութեան:

Մեզի համար ուրախութեան առիթ եղաւ տեսնել ձեր թեմերուն մէջ Հայց. եկեղեցւոյ հանդէպ ժողովուրդին կապուածութեան և նուիրաբերման երևոյթը, որ այնքան շքեղօրէն ի յայտ եկաւ Մեր Հովուապետական այցելութեան առթիւ:

Կոչ կ'ուղղենք նախ մեր եկեղեցականաց դասուն, բոլոր հոգևորականներուն, եկեղեցական նուիրապետական կարգերու բոլոր աստիճաններուն և պատասխանատուութիւններուն մէջ: Սիրեցեալ կրտսեր եղբայրներ, լծուեցէք տենդագին, շարունակական, ներդաշնակ գործունէութեան ամբողջական ինքնընծայումով, անստուեր սիրով, ձեր բոլոր ոյժերու և ժամանակի ու միջոցներու գերազոյն աստիճանի օգտագործումով, մեր սուրբ եկեղեցիներու էական աւանդութիւններու առողջ ու հաւատարիմ պահպանութեամբ ու կենսաւորումով մեր ժողովուրդի հոգևոր կեանքի մշակումով արժեցնելով և արդիւնաւորելով ձեր աստուածատուր կոչումը: Այս է մեր՝ հոգևորականներուս աւագագոյն պարտականութիւնը: Կը յիշեցնենք ձեզի Ս. Պօղոս Առաքեալի ներշնչողական խօսքերը. « Հոգւով եռացէ՛ք: Ջերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէ՛ք: Յոյսով ուրախացէ՛ք, նեղութեանց մէջ համբերող եղէ՛ք. յարատև աղօթեցէ՛ք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէ՛ք և միշտ հիւրասէր եղէ՛ք: Օրհնեցէ՛ք ձեզ հալածողները. մի՛ անիծէ՛ք, այլ օրհնեցէ՛ք: Ուրախացողներուն հետ ուրախացէ՛ք և լացողներուն հետ լացէ՛ք: Բոլորին հանդէպ նոյն

վերաբերումը ունեցեք. մեծամիտ մի՛ ըլլաք, խոնարհ մարդոց ալ ընկերութիւն ընելու պիջեցեք, և դուք ձեզ իմաստուն մի՛ համարեք: Ունէ մէկուն չարիքին՝ չարիքով մի՛ հատուցանեք: Ջանացեք ընել այն՝ ինչ որ բոլոր մարդոց աչքին բարի է» (ՀՌՈՄ. ԺԲ. 11-17): Թող ձեր կեանքն ու փոխադարձ յարաբերութիւնները հոգևոր խաղաղութեան բարիքը տարածեն և չլլան խռովութեան առիթ և պատճառ: Ս. Հոգւոյն պտուղները թող բաշխուին ձեր անձերուն խօսքերուն և գործերուն մէջէն, ըստ Առաքեալին պատգամին, այսինքն՝ «սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, արկունք, բարութիւն, հաւատարմութիւն, հեղութիւն, ժուժկալութիւն» (ԳԱՂ. Ե. 22-23): Նոյն Առաքեալին բառերով՝ «Ջերիստոս հագուեցեք (այսինքն՝ Զիսուս Քրիստոսի նկարագիրը ձեր վրայ առեք), և մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք» (ՀՌՈՄ. ԺԳ. 14): Եւ երբեք, երբեք մի՛ մոռնաք մեր Տիրոջ կենսաշէն պատգամը. «Աստուծոյ Հոգին է որ կեանք կու տայ. մարմինը միայն ոչինչ է ի կրնար ընել» (ՅՈՎՀ. Զ. 63):

Կոչ կ'ուղղենք մեր բոլոր աշխարհական հաւատացեալներուն, եկեղեցական կապմակերպութիւններու մէջ գործող պատասխանատուներուն և անհատ հաւատացեալներուն, որ եկեղեցին ըմբռնեն որպէս իրենց սեփական տունը և ըստ այնմ վարուին, իրենց լաւագոյնը ընծայելով անոր, որպէսզի անո՛ւմ մնան հոգևորապէս առողջ, բարոյապէս տոկուն և կեանքով երջանիկ և գործով աստուածահաճոյ և օգտաւէտ:

2. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՅՈՒՄ

Հոգևոր վերապարթօնքի այս շրջանին և մեր ազգի ու հայրենիքի նոր կեանքի պայմաններուն ներքև մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ անխախտելի միութեան գործակալ արտայայտութիւնը կարևորագոյն ապդակներէն մէկը պիտի ըլլայ մեր Ս. Եկեղեցւոյ զօրացման և հոգևոր ու ազգային դերի լիագոյն պտղաբերման:

Մեր Հայրապետական այցելութեան ընթացքին ուրախութեամբ նկատեցինք օրէ օր աճող ու զօրացող կամքը մեր ժողովրդի բոլոր խաւերու մօտ, փոխադարձ մերձեցման, վերջին տասնամեակներուն Ամերիկայի տարածքին մեր Եկեղեցւոյ ծոցին մէջ յառաջ եկած վարչական երկփեղկման վերջ տալու առաջադրութեամբ: Մենք երջանկութիւնը ունեցանք հաղորդակցութեան մէջ գալու մեր Եկեղեցւոյ հաւա-

տացեալներուն ամբողջութեանը հետ, առանց խտրութեան: Մեզ դիմաւորող հոգևորականներուն և աշխարհական բազմութիւններուն մէջ ողջունեցինք ներկայութիւնը վերջին չորս տասնամեակներուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգևոր խնամքը վայելող եկեղեցական պատասխանատուներուն և հաւատացեալներուն: Թէ՛ Միացեալ Նահանգներու և թէ Գանատայի մէջ, անձամբ այցելեցինք շարք մը եկեղեցիներ, որոնք հոգևորապէս կը մատակարարուին Կիլիկեան Աթոռին կողմէ և որոնք սիրալիր ընդառաջումով ընդունեցին մեզ: Տեղեկացանք որ վերջին տարիներուն գործակցութեան աւելի լայն դռներ են բացուած: Չենք կրնար մոռնալ մաւաւանդ երիտասարդ սերունդին մօտ պօրացած և օրէ օր առաւել ևս շեշտուած և շեշտուող ցանկութիւնը Հիւսիսային Ամերիկայի մէջ ստեղծուած մեր եկեղեցւոյ անբնական կացութեան վերջ տալու, մէկ թեմի շուրջ համախմբուելու, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան իրաւասութեան ներքոյ, մէկ խօսքով՝ աստիճանաբար վերստեղծուած տեսնելու այն բնականոն կացութիւնը, որ կը տիրէր նախքան բաժանումը. կացութիւն՝ որուն մէջ մեր Եկեղեցին կը գործէր որպէս մէկ թեմ և ուր ոչ մէկ խտրութիւն կը դրուէր Նուիրապետական Աթոռներու պատկանող հոգևորականներու ծառայութեան համար: Այսօր ալ այդ բնականոն վիճակը ստեղծելու բոլոր հնարաւորութիւնները կան. կը մնայ պանոնք կեանքի վերածել արի կեցուածքով, լայնախոհ մօտեցումով, փոխադարձ վստահութեան սկզբունքով:

Մեր Հովուապետական այցելութեան ողջ տևողութեան և մեր ժողովուրդին ուղղած խօսքերուն մէջ որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց յաճախակի և ուժգնակի եղանակով արտայայտեցինք Մեր հայրական սէրը և Հայրապետական հոգածութիւնը հանդէպ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ բոլոր պաւակներուն: Յայտնեցինք Մեր պատրաստակամութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր խնամքը ընծայելու բոլորին անխտիր:

Սիրելի՛ք,

Ներկայ աշխարհի ընդհանուր դրութիւնը, թէ՛ արտասահմանի մեր կեանքի պայմաններուն մէջ յառաջ եկած հիմնական փոփոխութիւնները, թէ՛ Մայր Հայրենիքի մէջ ապառ ու անկախ Հանրապետութեան հռչակումով, թէ՛ Ղաւաքաղեան շարժումի ծագումով և այլ ապդակներով յառաջ եկած ու շրջադարձային տարողութիւն ունեցող նոր կացութիւնները մեզ բոլորս կը դնեն այնպիսի պարտաւորութիւններու առջև, որ ի սէր մեր Եկեղեցւոյ հոգևոր նոր պար-

թօնքի վարձացման և ի սէր մեր ազգի ու հայրենիքի ու պետութեան ամրացման և պօրացման, մեզ կը հրաւիրեն նոր հայեացքով դիտելու և ըստ այնմ կազմակերպելու մեր կեանքը:

Պատմութեան իրադարձութեանց այս դրական և այնքան լուսալի և լուսադրիչ փոփոխութեանց հետ գիտնանք քայլ պահել և ժամանակի այս նշանները ճիշտ կարդալով՝ ըստ այնմ փոխուիւնք, չգործենք միայն անցեալի պայմաններէն թելադրուած մտածելակերպերով. իմաստուն և քաջ ըլլանք նոր եղանակներով գործել և ողջ աշխարհին ներկայանալ միութեան լուսապսակով:

Հիսիսային Ամերիկայի տարածքին վրայ հայրական ջերմ պգացումներով ու Հայրապետական ընդհանրական մեր պարտաւորութեան նախանձախնդրութեամբ՝ կը յորդորենք որ առաւել ոյժ տաք վերամիութեան շարժումին, երկխօսութեան անկեղծ ընթացքով, գործակցութեան լայն ճանապարհով, եղբայրական սիրով վերաբերումով թէ՛ եկեղեցական-հոգևոր և թէ՛ ազգային-աշխարհական կեանքի մակարդակներու վրայ, այս բոլորով և այս բոլորին մէջէն որպէս սնեռակէտ ունենալով մեր Եկեղեցւոյ թեմական միութեան վերաստեղծումը և այդ միութեան մէջէն մեր Եկեղեցւոյ և ազգի պօրացումը:

Քաջ իմացէք, որ ա՛յդ ընթացքով և ա՛յդ գոյավիճակի վերականգնումով նաև պատիւ և առաւել յարգանք պիտի շահինք յաչս Ամերիկայի և Գանատայի ժողովուրդին և պետական շրջանակներուն ու օտար եկեղեցական իշխանութիւններուն և պիտի արժանանանք գալիք սերունդներու երախտագիտութեան: Այդ գործընթացով է որ «Մէկ Եկեղեցի, մէկ ազգ և մէկ հայրենիք» նշանաբանը առաւել շօշափելի, պերճախօս և օգտառատ արդիւնքներով պիտի արժնորոշուի մեր կեանքին մէջ, ինչպէս ողջ Հայց. Եկեղեցւոյ և հայ ազգի կեանքին մէջ: Աստուծոյ կամքն է այդ. մեր ազգին նոր կեանքի հրամայականը: Ընդառաջեցէք անոր և փոխարէն պիտի վարձատրուիք ըստ Աւետարանական խորիմաստ խօսքին «մէկի տեղ՝ երեսուն, մէկի տեղ՝ վաթսուն և մէկի տեղ՝ հարիւր» (ՄԱՐԿ. Դ. 20):

3. ԴԵՊԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԼՈՒՍԱԽՈՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐԸ

Հայրապետական Մեր անդրանիկ այցելութեան ընթացքին ամենէն լուսաւոր կողմերէն մէկը որ յատուկ խնդրութիւն պատճառեց Մեզի որպէս Ընդհանրական Հոգևոր Հօր՝

ձեր նոր սերունդի վերաթնութեան կեանքի գեղեցիկ և յուսալից երևոյթն էր: Երիտասարդութեան Տարի" էիք հռչակած 1996-ր: Տարեակիւրիսն զուգադիպեցաւ մեր Հովուապետական այցելութիւնը: Հոգեկին հրճուեցանք ամէն քաղաքի ու շրջանի մէջ առանձին հանդիպումներ ունենալով երիտասարդ սերունդի անդամներուն հետ: Լսեցինք անոնց ձայնը, տեղեկացանք զանոնք հետաքրքրող, և երբեմն տագնապեցնող հարցերուն: Մեր հայրախնամ խօսքերով քանացինք անոնց հաղորդել Մեր սէրն ու հայեացքները զիրենք հրաւիրելով առաւել աստիճանի մասնակցութեան և յանձնառութեան մեր համայնքային կեանքին մէջ: Մեր ջերմ փափաքն ու յորդորն է որ երիտասարդներուն առիթ ընծայուի մեր եկեղեցիներու պատասխանատու մարմիններուն մէջ դե՛ր ստանձնելու: Երիտասարդութեան կապմուտը ման ամենէն ապրիլեցիկ եղանակներէն մէկն է անոնց հանդէպ վստահութիւն արտայայտելը և այդ վստահութեան որպէս փաստ իրենց պատասխանատուութիւններ յանձնելը:

Մեր սրտի ուրախութեան գեղեցկագոյն և ջերմագոյն երանգներէն մէկը եղաւ հայ դպրոցական կեանքի մէջ մեր մատղաշ սերունդի առոյգ, կայտառ, շէն ու շէնշող ներկայութիւնը: Անոնց թարմ ու զիւ ձայներուն մէջէն լսեցինք վաղուան հասուն և ուժեղահունչ ձայնը մեր Եկեղեցւոյ և ազգի գալիք լուսապայծառ ապագային: Անոնց վառ ու ճառագայթարձակ նայումներուն մէջ արդէն նկատեցինք փարատումը անցեալի սերունդներուն ստորակայութեան զգացումէն յառաջացած երբեմն տխուր, երբեմն անվստահ հոգեբանութեան, և փոխարէնը տեսանք ինքնավստահ, ապագայատեսիլ, խանդալից պատկերը մեր ապագայի լինելութեան:

Հայց. Եկեղեցիով մարմնաւորուած քրիստոնէական հաւատքի տարածման և խորացման կողքին՝ բացէ՛ք անոնց առջև հայ լեզուի ու գրականութեան, հայոց պատմութեան և մշակոյթի ոգեղէն արժէքներու "հապարագանձ" հարստութիւնը: Թող հաղորդուին, թող ճանչնան, և ներքին համոզումով և ինքնակամ մօտեցումով թող հպարտանան, թէ՛ հապարամեակներու ծնունդ են և հապարամեակներու կերտումի քանուորներ պիտի ըլլան, իրենց Եկեղեցիին, լեզուին, մշակոյթին ու հայրենիքին նախանձախնդրութիւնը դարձնելով իրենց անհատական և հասարակական կեանքի մղիչ ոյժը: Մեր աչքի քիբերն են անոնք, մեր վառօրէն տրոփուն սրտին զարկերը, մեր մտքին ճառագայթները, մեր կամքին պրկումը, մեր լինելիքին գրաւականը: Ոչինչ խնայեցէք որպէսզի մաքուր մնան քիբերը, առողջ բարախին զարկերը, լուսաճաճանչ շողան ճառագայթները, պինդ ու ամուր մնայ

պրկումը կենսայից ու ստեղծագործ դառնայ լինելիքը...: Դո՛ւք էք ձեր պաւակները: Առանց անոնց՝ դուք կը դադրիք ըլլալէ...:

4. ՎԱՍՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՄԵՐՈՅ

Որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց ալստեղ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, մեր Մայր Հայաստանի հողին, ժողովուրդին, կեանքին ու ջանքին, ցաւին և ուրախութեան հետ խառնած ըլլալով կեանքս, մինչև վերջին շունչս խառնած պահելու ցանկալի ու բախտաւոր ճակատագրով, Հովուապետական այցելութեան ընթացքին բազմիցս խօսելու առիթ ունեցայ ձեզի՝ կրօնական, հոգևոր, կրթական, մշակութային, ընկերային, ազգային ընդհանրական արժէքներուն և անոնց մշակումին և վարգացումին անհրաժեշտութեան առընթեր՝ մեր պապենական երկրի վերանորոգեալ և վերանկախացեալ այս վճռական ժամանակներուն, Հայաստանի անկախ Հանրապետութեան այս նորաբաց դարաշրջանի արշալոյսին մասին: Սա մե՛ր հողն է, մե՛ր հայրերու ժառանգը, մե՛ր ուսերուն շալակը. սա մե՛ր ինքնութեան և արժանապատուութեան ցուցանիշն է. սա՛ է մե՛ր լինելութեան ճանապարհը. սա՛ է մե՛ր արիւնը, մեր արցունքը, մեր քրտինքը, մեր ճակտի գիրը, մեր մորթի գոյնը: Եւ այս բոլորն է՝ իր լոյս ու մութ կողմերով, իր երգով ու վերքով, իր կեանքի դրական ու ժխտական կողմերով, իր փառքով ու պարտքով, իր ամբողջական գոյութեամբը:

Դուք Միացեալ Նահանգներու և Գանատայի տարածքին վրայ որպէս հաւատարիմ և հայրենաշէն քաղաքացիներ, հաւատարիմ՝ ձեր երկիրներու գերագոյն շահերուն՝ ամէն ինչ ի գործ կը դնէք, և ատով շահած էք, ու կը շահիք, պատիւ ու յարգանք բոլոր ձեր քաղաքակիցներուն և անոնց պետական ու հասարակական ղեկավար ու պատասխանատու շրջանակներուն կողմէ: Շարունակեցէ՛ք ձեր այդ կենսաընթացի ոճը, որովհետև հայ ժողովուրդի նկարագրին հարապատագոյն արտայայտութիւնն է այդ:

Այս բոլորի կողքին, ձեր պապենական երկիրը, ձեր արմատներուն աշխարհը, ձեր Մայր Հայաստանը ներկայ է ձեր ապրումներուն մէջ: Միացեալ Նահանգներու և Գանատայի մէջ դուք լաւ գիտէք թէ ինչքա՛ն մեծ բարիք է տարբեր կրօնական համոզումներէն և տարբեր ցեղային խաւերէն ու ազգային աւանդութիւններէն քաղուած և ներդաշնակութեան մէջ արտայայտուող այլապանութիւններու բազմերանգ հարստութիւնն ու զօրութիւնը:

Դուք այդ բոլորին մէջ կը բերէք հայութեան գոյնն ու ձայնը,

նկարագիրն ու կերպարը, խաղաղարար և շինարար դերը, նախաձեռնող և ստեղծագործ ոգին: Չեր Հիւսիսային Ամերիկեան այդ կեանքին շաղուածքին և դրութեան մէջ ձեր մատուցած ծառայութեանց շարքին բնական տեղ կը գրաւէ նաև ձեր սէրն ու նուիրումը ձեր հայրենական ժառանգութեան, ձեր մայր հողին ու հայրենիքին:

Չեր այս մայրաստան երկիրը, Հայաստանը, նոր ու յուսալոր ճանապարհի մէջ է մտած: Մեր դարերու երապը մարմին է առած, մեր հերոսներուն և նահատակներուն արիւնը նոր բխումը է ստացած, մեր ապատութիւնն ու անկախութիւնը նոր մարմին և կառոյց է զգեցած Հայաստանի նոր Հանրապետութեան ստեղծումովը: Առաջին այս հնգամեակը ինքնամրացման, վերակազմակերպման առանցքային նշանակութիւն ունեցաւ մեր նոր հայրենիքին համար: Մունկի գանք մեր հոգիներուն մէջ և փառք տանք Աստուծոյ որ ահա նոր ճանապարհը կ'ընթանայ առաջ, հակառակ բոլոր տեսակի նեղութիւններուն, տագնապներուն, տարածաշրջանին մէջ տիրող ընդհանուր կացութենէն, Արցախի մեր ժողովրդի արդար իրաւունքներու պաշտպանման ճիգերէն, Լենինականի երկրաշարժի ահալոր աղէտի վերքերէն, շրջապատումի անարդար գոյավիճակէն առաջացած:

«Մեր հայրենիք իւր քաջ որդւոց սուրբ քրտինքով պիտի լինի վերակառուցեալ»: Յաճախ ըսի ու կրկնեցի այս խօսքը Մեր Հովուապետական այցելութեան ընթացքին: Աւելցուցի. այս քրտինքին մէջ իւրաքանչիւր հայ ունի ի'ր քրտինքէն կաթիլ մը: Հայրենիքի և սփիւռքի միջև կապը թող պօրանայ փոխադարձ սիրոյ և վստահութեան զգացումներու և սկզբունքներու հրամայականին տակ: Վե'ր մնանք տեղայնական, խմբակցական, անհատական նեղհայեաց մտածելակերպերէ, չնչին, անկարևոր երևոյթներէ: Առարկայական մօտեցումով ըմբռնենք իրական կացութիւնը, ամբողջատեսական եղանակով դիտենք հարցերն ու կարիքները, գնահատել գիտնանք կատարուած դրական գործերը, նախանձախնդրութեան ոգիէն թելադրուած, քննադատական առողջ դիրքորոշումէ մեկնելով մատնանշենք թերացումները, միշտ պանոնք սրբագրելու և թերին լրացնելու հայեցակէտով: Այս է իսկապէս հայավայել կեցածքը բոլոր հայերու թէ՛ Հայաստանի և թէ՛ սփիւռքի մէջ: Այս է միակ ճանապարհը հայրենաշինութեան, պատմակերտութեան: Չրլլանք պատմութեան զոհերը, սոսկ անցեալի տուեալներով ապրողներ. ըլլանք պատմութեան կերտիչները, ներկան բարելաւելով ու ապագան ամուր հիմքերու վրայ դնելով:

Շատ խօսեցանք հայրենասիրութեան մասին. հիմա գոր-

ծենք վասն հայրենաշինութեան: Ինչպէս այնտեղ բազմիցս ըսի, մեր նոր կեանքի բառարանին մէջ հայրենասիրութիւն բառը վերածուելու է հայրենաշինութիւն բառին: Այս է հայրենակերտութեան հայակնիք առողջ փիլիսոփայութիւնը:

5. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՉԱՐԳԱՅՈՒՄ

Հովուապետական այցելութեան մէջ ամենուրեք լայն տեղ գրաւեցին Մեր հանդիպումները Քրիստոնէական եկեղեցիներու հոգևոր պետերու և անոնց ներկայացուցիչներու, միջեկեղեցական կապակերպութիւններու և անոնց պատասխանատուներուն հետ: Մեր ժամանման առաջին իսկ օրէն Մենք եղբայրական սիրով ողջունուեցանք Ուղղափառ, Կաթոլիկ, Եպիսկոպոսական և Բողոքական եկեղեցիներու պետերուն և ներկայացուցիչներուն կողմէ: Աղօթքի, խօսակցութեան բազմաթիւ առիթներ ունեցանք անոնց հետ թէ՛ Միացեալ Նահանգներու և թէ՛ Գանատայի ողջ տարածքին: Եղանք անոնց հետ աղօթակից մեր և իրենց եկեղեցիներուն մէջ, մասնակից՝ սիրոյ ճաշի սեղաններու շուրջ, խօսակից՝ հանդիսութիւններու ընթացքին: Միութեան զգացումներով և միասնական գործակցութեան տրամադրութիւններով ունեցանք բովանդակայից խօսակցութիւններ Միացեալ Նահանգներու և Գանատայի միջեկեղեցական հորհուրդներու ղեկավար անձերուն հետ:

Ի. դարու քրիստոնէական եկեղեցւոյ կեանքը խորապէս դրոշմուած պիտի մնայ միութենական շարժումին (ecumenical movement) տիրական և բազմօգուտ իրագործումներովը: Մեր եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի թեմերու կեանքին մէջ առողջ և աշխոյժ գտանք ձեր մասնակցութիւնը այդ բարեբեր և աստուածահաճոյ նուիրական գործին: Փոխադարձ ճանաչման և լծակցութեան այդ ընթացքը փոխադարձ հարստացման աղբիւր է: Մենք երկար տարիներ, աստուածաբանութեան ուսանողութեան մեր օրերէն ասդին, հաւատացողը եղած ենք միութենական շարժումին և Մեր տկար ուժերովը Մեր լայն ու շարունակական մասնակցութիւնն ենք բերած անոր թէ՛ տեղական, թէ՛ շրջանային և թէ՛ համաշխարհային մակարդակներուն վրայ: Անձամբ ապրած և վայելած ենք ինքնահարստացման բարիքը այդ բոլորէն քաղուած: Օտար եկեղեցիներու դրական իրագործումներուն կենդանի և ուղղակի հաղորդութեամբ իրապէկ մնայր և մեր եկեղեցւոյ իսկատիպ, վաւերական էութիւնն ու դրութիւնը, կացութիւնն ու գործունէութիւնը հարապատօրէն ուրիշ եկեղեցիներուն ծանօթաց-

ներու Մեր ջանքը նկատած ենք Մեր հոգևորական կեանքի ու ծառայութեան կարևորագոյն բաժիններէն մէկը:

Ահա թէ ինչո՞ւ կը յորդորենք ձեզ՝ բոլորդ շարունակել և աճեցնել ձեր մասնակցութիւնը միջեկեղեցական կեանքին բոլոր մակարդակներու վրայ, տեղական, ծխական մակարդակներէ սկսեալ մինչև թեմական մակարդակները: Բրիտոսի աղօթքն ու մաղթանքը թող ըլլայ ձեզ առաջնորդող սկզբունքն ու ուղին: Մեր Տէրը ինք էր որ աղօթասոյց բառերով ըսաւ իր առաքեալներուն և անոնց հետևող բոլոր հաւատացեալներուն. «Չեմ աղօթեր միայն իրենց (առաքեալներուն) համար, այլ նաև անոնց համար՝ որոնք անոնց քարոյութեամբ ինծի պիտի հաւատան: Կ'աղօթեմ որ անոնք բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս որ դուն, ո՛վ Հայր, իմ մէջս ես և քու մէջդ, այնպէս ալ անոնք մեր մէջ ըլլան, որպէսպի աշխարհը հաւատայ, որ դուն ղրկեցիր զիս: Այն փառքը որ ինծի տուիր՝ իրենց տուի, որպէսպի մէկ ըլլան, ինչպէս որ ես և դուն մէկ ենք: Ես անոնց մէջ ըլլամ և դուն՝ իմ մէջս, այնպէս որ անոնք կատարեալ կերպով մէկ ըլլան, որպէսպի աշխարհը գիտնայ թէ դուն ղրկեցիր զիս և թէ՝ սիրեցի զանոնք, ինչպէս որ դուն զիս սիրեցիր» (ՅՈՎՀ. ԺԷ. 20-23):

Ընդհանուր քրիստոնէական այս հրամայականին ներքև գործօն դերակատարութիւն բերէք քրիստոնէական միութեան վերականգնման հասարակաց առաքելութեան մէջ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ աւանդութիւնը պահելով կենդանի և զայն ընծայելով հաղորդակից քրիստոնէական միւս եկեղեցիներուն:

6. ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՁՕՐԱՅՈՒՄ

Մեր Հովուապետական այցելութեան այլ երեսներէն և բարիքներէն մէկը եղաւ շարքը այն հանդիպումներուն զորս ունեցանք ձեր երկիրներու պետական և քաղաքային իշխանութեանց և միջազգային կապմակերպութեանց ներկայացուցիչներուն հետ ամենաբարձր աստիճաններէն սկսեալ մինչև ամենապարզ մակարդակի վրայ գործող անձերը:

Ձեր երկիրներու մէջ տիրող ապատութեան պայմաններուն բերումով՝ դուք ունիք բոլոր հնարաւորութիւնները զարգացնելու ձեր քաղաքացիական կեանքը՝ լայնօրէն մասնակցելով ձեր երկրի հասարակական կեանքին, պետական, քաղաքային, քաղաքական, կրթական, մշակու-

թային, տնտեսական, ճարտարաշինական, բարենսիրական և այլ բոլոր երեսներուն, թէ՛ տեղական, թէ՛ նահանգային և թէ՛ ազգային դաշնակցային մակարդակներու վրայ:

Սրտի խոր գոհունակութեամբ Մենք անձամբ հաստատեցինք այն իրողութիւնը որ ներկայ այս ժամանակներուն շատ աւելի լայն տարողութիւն է զգեցած մեր ամերիկահայատակ ժողովուրդի պատկաններուն մասնակցութիւնը Ամերիկեան ընդհանուր կեանքի բնագաւառներուն մէջ: Մեր ուրախութիւնը աճեցաւ երբ պետական հասարակական պատասխանատուներուն հետ մեր խօսակցութեանց ընթացքին իրապէս դարձանք այն իրողութեան, որ Միացեալ Նահանգներու Վսեմաշուք Նախագահէն սկսեալ մինչև Ծերակոյտի և Քոնկրէսի անդամներ, Գանատայի Բարձրագոյն իշխանութիւնը, նահանգապետներ, քաղաքապետներ, մեծ կապմակերպութեանց ներկայացուցիչներ, խոր գնահատութեամբ արժնորեցին ձեր դրական և գործօն դերակատարութիւնը Ամերիկայի ընդհանուր համայնական կեանքին: Որպէս լիիրաւ քաղաքացիներ՝ ձեր պարտաւորութիւնն է ձեր լիարժէք և յարաճուն մասնակցութիւնը բերել ձեր երկիրներու ընդհանուր կեանքին թէ՛ Միացեալ Նահանգներու և թէ՛ Գանատայի տարածքին: Կը վայելէք այդ երկիրներու բոլոր բարիքները. պանոնք արժեւորէք ձեր տալիք բաժիններովը, գործօն մասնակցութեամբ: Այս է մեր հայ ժողովուրդի պատմութենէն ժառանգած նկարագրի շնորհինկալ և երախտարժան վերաբերումի ոճն ու ընթացքը:

Նոյն տեսակի ուրախութիւն էր Մեզ համար երբ առիթորունեցանք տեսնելու միջազգային կապմակերպութիւններու բարձրագոյն աստիճանի պատասխանատուները, ինչպէս Համաշխարհային Պանքի նախագահը Ռաշինգթոնի մէջ և Միացեալ Ազգերու Կապմակերպութեան Ընդհանուր Քարտուղարը՝ Նիւ Եորքի մէջ: Անձամբ տեղեկանալով իրենց լայնախոհ և բարեացակամ մօտեցումին, մեր ազգին, մեր Հայրենիքին և մեր Անկախ Հանրապետութեան հանդէպ՝ մեծապէս հրճուեցանք և բարձրօրէն գնահատեցինք իրենց այդ օրինակելի կեցուածքը:

Կոչ կ'ուղղենք ձեր բոլորին որ առաւել թափ տաք ձեր հասարակական կեանքի այս ընդարձակուող տարածքին և հասնիք պատասխանատուութեան նորանոր բարձունքները, և բարիք ու երախտիք շահիք թէ՛ ձեզ համար, թէ՛ ձեր երկիրներուն համար և թէ՛ ձեր հայ ժողովուրդի և Մայր Հայրենիքին համար:

7. ԴԵՊԻ ՊԱՐԶՈՒԹԻՒՆ ԵՒ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ

Հապար անգամ փառք տուինք Բարեաց Բաշխիչ Ամենակալ Աստուծոյ, որ ձեր չարքաշ և յարատն աշխատանքին արդար քրտինքովը ընդհանրապէս հասած էք տնտեսական կեանքի բարգաւաճ վիճակին: Ձեր "հալալ" վաստակով ձեռք բերած էք հանգստաւէտ կեանքի բարեկեցիկ ապրուստի միջոցներ: Ապրի՛ք: Հայոյ պէս ապրիք. պարկեշտ, նախաձեռնող, տենդագին աշխատանքով արժևորեցէք ձեր աստուածատուր կարողութիւններն և Աստուծոյ ընձեռած բոլոր պարգևները:

Բարեկեցիկ կեանքը ունի իր հետ նաև փորձութիւնը շոալյութեան. այն ձգտումին որով կը տարուինք բնական, անհրաժեշտ և մարդկային ապնիւ կարիքներէն անդին անցնելու և ոչ էական, ոչ օգտակար, ոչ երջանկաբեր կենցաղակերպերու հետևելու, ինչ որ յաճախ կ'առաջնորդէ մեզի դէպի անիմաստ մսխումներ, վատնումներ և՛ մարդկային ճիգի և՛ նիւթական միջոցներու:

Մեր Հովուապետական այցելութենէն կրած տպաւորութիւններէն մէկն այն եղաւ որ Հիւսիսային Ամերիկայի տարածքին նոր գիտակցութիւն մը սկսած է բացուիլ Ամերիկեան ընկերութեան մէջ: Այդ այն գիտակցութիւնն է, որ զիրենք կը մղէ սպառողական ընկերութեան ծայրայեղ աստիճանի կենցաղակերպէրէն վերադառնալ դէպի աւելի բնական պարպութիւն և ժուկալութիւն: Տարապայման, սանձարձակ սպառողութեան աստիճանի հասած ընկերութիւններուն մէջ կայ անկումի վտանգը: Պատմութիւնն է վկան այդ ճշմարտութեան: Բնական ուժանիւթերու օրէ օր պակասումը արդի աշխարհին մէջ, նիւթական աշխարհի և կենսոլորտի նկատմամբ զգոյշ վերաբերումի կը հրաւիրէ ողջ մարդկութիւնը և նաև ձեզ Միացեալ Նահանգներու և Գաւառաւոր տարածքին: Բնութեան առողջ պահպանութեան (environmental) հարցերը հասած են մտահոգիչ դառնալու աստիճանին: Ձեր նիւթական միջոցներու յումպէտս գործածութեան փորձութեան դէմ զգաստ կեցուածք որդեգրեցէք: Աստուծոյ դէմ գործուած մեղք է իր տուած բարիքներու չարաշահումի աստիճան անիմաստ մսխումը: Ձեր քրտինքը արժեցնուցէ՛ք: Ձեր շահածը ձեր իսկական բարիքին համար գործածեցէ՛ք թէ՛ անհատական և թէ՛ հաւաքական կեանքի մակարդակներու վրայ: Չայն ծառայեցուցէք ձեր երջանկութեանը և ոչ թէ սպառէք սոսկ հաճոյքին, ժամանցին և փցուն, անիմաստ և անարժէք բաներու: Մի՛ մոռնաք երբեք Մեր այն խօսքը զոր բազմիցս

արտասանեցինք թէ՛ ճղճիմ ու վաղանցուկ կենցաղակերպերուն համար լայն սպառող մարդը ի վերջոյ ինքն է որ կը սպառի իւր սպառածովը...:

Չեր ընտանեկան մաքուր կեանքը, քրիստոնէական և հայկական հարապատ աւանդութեամբ թող մնան միշտ առողջ և կենդանի: Չեր եկեղեցիներն ու դպրոցները, ձեր հասարակական կեանքի հաստատութիւններն ու կեդրոնները, մշակոյթի առողջարար և ապնուացուցիչ ձեռնարկութիւնները թող մնան ձեր մշտական գոյրգոյրանքին առարկայ: Մնայուն, երջանկաբեր, ճշմարտօրէն վայելելի և ըմբոշխնելի արժէքներով, ապրումներով և զբաղումներով լեցուցէք ձեր անձնական և ընտանեկան կեանքը և անոնցմով արժեցուցէք ձեր համայնական կեանքը, որ սփիւռքի պայմաններուն մէջ միշտ ենթակայ պիտի մնայ ուժացման, այլասերման վտանգին ու փորձութեան:

Չեր սփիւռքեան կարիքներուն կողքին միշտ մնացէք գիտակից և նախանձախնդիր ձեր Մայր Հայրենիքի ու պետութեան և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարիքներուն հանդէպ: Անոնք կը գտնուին դէմ-յանդիման վերականգնումի և վերակազմակերպումի անյետաձգելի պարտաւորութեան, վերապարթօնքի և վերածաղկումի անյետաձգելի և ստիպողական պարտաւորութեան: Մի՛ մոռնաք երբեք ձեր Մայր Հողը և Մայր Եկեղեցին, մեր Հայրենի Պետութեան և Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կեանքի այս նոր շրջանին: Վերադարձէք դէպի պարզակեցութիւն, դէպի ժուժկալութիւն, որոնցմով կը հասնիք ձեր երջանկութեան և որոնցմով երջանկութիւն կը ցանէք մեր բոլորի կեանքին մէջ ի Մայր Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Մեր սուրբ պատարագի վերջին աղօթքին բառերովը կը կնքեմ այս հայրական սիրոյ, շնորհակալութեան, գնահատանքի, յորդորի այս Հովուական Թուղթը յիշեցնելով ձեզի թէ. "Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Քէն": Ինչ որ Աստուծմէ է եկած՝ ընծայենք Աստուծոյ մեր կեանքին առողջ ապրումովը և մեր գործերուն բարերար արդիւնքներովը ի սէր մեր երջանկութեան, Աստուծոյ փառքին, մեր ազգի ու հայրենիքի բարիքին և մեր Ս. Եկեղեցւոյ շէնութեան, բարեկարգութեան և պայծառութեան. ամէն:

Ողջ լերուք ի Տէր, պօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն և յաւետօրինեալ ի Մէնջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ